

միայն մեծամեծաց քով կը գտնուին։ Պարսկաստանի ընտիր ձիերն են լուրասանի ձիերը, մեծղի և ուժեղ քան զամէնը, որոնք կանոնաւոր զօրաց կը գործածուին։

Այրի կենդանիներէն կը գտնուին Պարսկաստանի մէջ, առիւծ, վագր, ընծափուծ, գայլ, իշավայրի, առն, վիթ, բորենի, չնագայլ, աղուէս, ցուլ, կապիկ. օձ ալ շատ կը գտնուի երկրին սաստիկ տաքութեան պատճառաւ, բայց թունաւոր տեսակները քիչ են։ Երկրին մեծ վնաս հասցընողներն են մարախը, սարդի տեսակ մը որ բարձագութ կ'ըսուի, կարիճ և ձերմակ մը ջիւն։

Երկիրը ինքնին որչափ որ ալ բարեքեր չէ՝ բայց ջանքով շատ տեսակ պըտուղներ կը հասցընէ. ինչպէս նաև խաւարտ, մեկոն, արմաւ, ծաղիկներ, վարդ, ծարիր, կանեփ, խաշնդեղ, ընդոյզ ործացուցիչ, մատուտակ, խէժ դառն, խունկ, սուսամ, ծխախոտ, քրքում, տորոն, բամբակ, շաքարի եղէցն, խազող, չամիչ. որոնցմով մեծաւ մասսամբ կ'ընէ իրեն վաճառականութիւնը ուրիշ երկիրներու հետ. և Պարսկաստանէ դուրս ելած վաճառքներն են, մետաքս, զիստոր, ասր, մարգարիտ, շալ, վարդաջուր, դէմակէքի, ծխախոտ, գրչի եղէգ, քրքում, ընկոյզ, որիզ, գաւազան ծխաձիգ, կապերտ, ափիոն, շաքար։

Կը շարունակուի։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՊՈԼՍՈՅ

(Տես երես 75)

ԳԼՈՒԽ Դ.

Արեւելան կայսերութեան վիճակն Յուստիանոսէն մինչև Եռինէի մահը։

Անաստասայ մահուընէն ետեւ բազմաթիւ կուսակցութիւնք երեան ելան. և որովհետեւ Կնաստաս իրեն յաջորդ

մը չէր որոշած, անոր համար իւրաքանչ չիւր կուսակցութիւն իր գլխաւորը կ'ու զէր որ կայսր ըլլայ։ Կմանս ներքինին՝ որ արքունեաց հազարապետն էր, արծաթոյ մեծամեծ գումարներ տուաւ Յուստիանոսի, որ պահապան զօրաց գլխաւորն էր, որպէս զի զանոնք զօրաց բաժնէ և անոր եղաքորդին Յակովի. տուր կայսր դնել տայ։ Քուստիանոս բաժնեց զայն իր անուամբը, և այսպէս զօրքը շահեցաւ, որ զինքը կայսր անուանեցին նոյն իսկ Կնաստասայ թաղման օրը։

Այս Քուստիանոսի վարքը ամբողջ վիպասանութիւն մըն է պատմութեան մէջ, ինչպէս վիպասանական է նոյն իսկ լոստանդնուապօլսոյ պատմութիւնը։ Քուստիանոս Յակովիոյ Յեթերիանա քաղաքը ծնած էր, ու տղայութեան ժամանակն ոչխար արածելով անցուցած էր, վերջը աղքատութեան պատճառաւ հայրենիքէն ելաւ և ոտքով եկաւ լոստանդնուապօլիս, յամին 470. անոք և անօգնական, և բոլոր յոյսը ապագային վրայ զրած էր, ինչպէս ամէն բաղդախնդիր մարդիկ՝ զորոնք բաղդը փառաւոր աստիճաններ կը հանէ։ Առն կայսրն, որ իրեն հայրենակիցն էր, տեսնելով անոր դէմքին գեղեցկութիւնը և հերակլեան ոյժն, իր թիկնապահ զօրաց մէջ դրաւ զինքն. այս հովիւ երիտասարդը Պարսից և Խաւրացւոց դէմ մեծամեծ քաջութիւններ ցըցուց։ Առն զինքը զօրավար անուանեց, և իր յաջորդն Կնաստաս սինկղիտուի պատուանունը տուաւ անոր, և իր թիկնապահ զօրացը գլուխ դրաւ զինքը։

Քուստիանոս կին ունէր իր գերուհին, որ կ'ըսուեր Լուպիկինա. այս անունը փոխեց ու Խոփիմիա դնել տուաւ. քովը կանչեց բոլոր իր ազգականները, որոնց մէջն էր նաև Քուստիանոս, որ լոստանդնուապօլսոյ պատմութեան մէջ ընդարձակ էջեր պիտի բռնէր։ Ըուզեց ոչ կարդալ սորվիլ և ոչ գրել. փայտէ պնակիտներու վրայ իր անունը կազմող տառերը փորուած էին, և

իր ատենադպիրները կ'առաջնորդէին կայսեր ձեռացն ու գրչին, երբ պէտք կ'ըլլար տէրութեան հրովարտակ մը ստորագրել: Ի՞այց իրքեռորդւոյն Հյուստինիանոսին ամենայն կերպով գեղեցիկ դաստիարակութիւն մը տալ տուաւ, և զինքը հետզիետէ հիւպատոս, կայսերական զօրաց զօրավար անուանեց, և իրեն յաջորդ որոշեց, ու կայսր պատկել տուաւ՝ յամին 527: Ո իտուլիանոսի սպանութիւնն, որ փառասէր և անգութ Հյուստինիանոսն ի գլուխ տարաւ, և ուզեց սուրբ խոր հըրդոց մատչիլ իր թշնամոյն հետ, որպէս զի լաւ մը խարե զինքը, Հյուստինոսի հետ խօսակցիլ արևելեան և արևմտեան եկեղեցիներն իրարու հետ միաբանելու, բայց մահը վրայ համելով մեռաւ, և օգոստոսի 527, եօթանասունեւթը տարեկան: Այսի և մեծափրտ էր, բայց տգէտ, և ամենեւին իր առաջին բարուց բրտութիւնները չփոխեց: Այսերական թագը շատ աւելի նուազ կը վայելը իրեն քան թէ սուրը, կ'ըսեն Խւագը և Օ ժնարաս: Ինը թագաւորութեան ժամանակը կրկէսին մէջ կառամարտութիւն ընելով անցուց: Հոն չորս կառք մէկէն վազցընել կու տար՝ կառավարներուն ձերմակ, կարմիր, կանաչ, կապոյտ գունով հագուստներ հագուեցընելով. թէ ժողովուրդը և թէ կայսրը այս տեսակի խաղերու վրայ մեծ սէր ձգեր էին ու երբեմն մէկ գոյնը կ'ընտրէին երբեմն մէկալը: Ինգամ մըն ալ կապոյտը ամենուն սիրելի եղած էր, ինչպէս նաև Հյուստինոսի, և ասկէ մեծամեծ կը սիւներ ծագեցան: Այսպոյտները տեսնելով որ կայսրը և ուրիշ մեծամեծները իրենց կողմն են, սկսան մէկալ դոյներուն նախատինք ընել. բարբարոսց հագուստները հագած, և անոնց կոպիտ սովորութեանցն ալ հետեւը բոլոր գիշերը կոստանդնուպոլիսոյ փողոներուն մէջ վեր վար կը քալէին, ինչ զիմայնին ելլէր՝ կը յափշտակէին,

երբեմն ալ յափշտակած բաներնուն տէրերը կը սպաննէին: Ի՞անի որ չէին պատժուիր՝ իրենց յանդգնութիւնն ալ կ'աւելինար. որով սկսան ինչուան ցորեկ ժամանակ որ և իցէ տեղ, ու նաև դատաւորաց առջեն սպանութիւններ ընել: Ո եծ պարծանք կը սեպէին՝ իրենց զիմայնը մէկ զարնելով մը մեռցունել. առանց զէնքի և առանց ծառաներու փողոցները քալտղին բանը գէց էր: Ո յս անկարգութիւններն երեք տարի տեղին. վերջապէս տէսաւ Հյուստինոս որ ծայրը գէմն կ'երթայ, ջանաց որ անոնց գէմն առնու: Հյուստինիանոս որ արդէն կայսեր իշխանակից էր, դրաւ գլուխը կայսերական թագը աւանց ընդդիմութեան ոչ զօրաց, ոչ ծերակուտին և ոչ ժողովրդեանն: Ո օրեղբօրը պէս Հյուստինիանոս գեղ տեղ մը յարդի վրայ ծնած, բանակներու մէջ մեծցած, Ո իտուլիանոսի քաջ զօրավարին մահուամբը կեսարաց կարգն անցած, տղայական զքօսանօքն Դիոմետիանոսի նման՝ աւելի վախ պիտի ձգէր սակայն իր առած դաստիարակութեամբը կեանքը փառաւոր եղաւ և անունը հռչակաւոր. և իր երեսունեւութը տարուան թագաւորութեան ժամանակ կարծես թէ կայսերութիւնը նոր կեանք ու նոր զօրութիւն առաւ (527-565): Ո յս փառաց ալ ոչ այնչափ իր հանճարովն հասաւ, որչափ Ծիկոդորա թագուհւոյն, Ծիկուսարիսուի և Կերսէս պատրիին ձեռքով: Վ անի որ հիւպատ էր՝ շատ ստակ ծախսեց Հյուստինիանոս առատաձեռնութեանց և տէսարանաց: Համին 521, քսանուհինք առիւծ և երեսունեւ վեց ընձառիւծ զնեց, և բոլորն ալ կը կէսը ձգել տուաւ, որոնք զիրար պատուցին ի մոլեկան ծափահարութիւն բազմութեան հանդիսականաց: Ո րդէն կոստանդնուպոլիսոյ մէջ եղած կուսակցութեանց վրայ խօսեցանք. Հյուստինիանոս կողմնակից եղաւ կապոյտներուն, և Ծիկոդորա կանաչներուն:

քուհի անուանել տուաւ, և որ մեծ ազդեցութիւն ունեցաւ իր տէրութեաւ նը վրայ, աննշան տոհմէ էր: Աստանդնուպօլիս, Կ'ըսէ Պլրոկոպիոս իր Գաղղռնի պատմութիւն ըստած գրոց մէջ, Կ'կակիոս անունով մարդ մը կար, որ կանաչը սուած կողմնակցութեան՝ ժողովրդեան դիմացն որս ընելու կենդանիները կը սնուցանէր, անոր համար արջապան ալ կ'ըսուէր: Կ' Կ'կակիոսն Կ'նաստասայ ժամանակ հիւանդութեամբ մը մեռնելով՝ ընտանիքը խեղճութեան մէջ թողոց: Կինն ուրիշ մը հետ նորէն կարգուեցաւ, որ յանձն առաւ բոլոր տանը հոգը տանիլ: Կ' յն միջոցին թէտրոնին տէրը արջապանին պաշտօնն ուրիշի ծախսեց, որով այն խեղճ կինը բոլորովին երեսի վրայ մնաց: Ո' եծ հանդիսի որ մը, իր երեք աղջիկներն հետն առած, որոնց անուանքն էին Ասմիտոնա, Ծակոդորա, Կ'նաստասիա, և շատ գեղեցիկ էին, ծիարձակարան գնաց. և երեքին ալ գլուխը մէկմէկ ծաղկէ պսակ զրած՝ զրկեց որ երթան այն կուսակցութիւններէն չնորհը ինդրեն. հանաւնէրը անոնց խնդիրը մերժեցին. իսկ հապոյտնէրն անոնց վրան գթալով՝ մօրերնուն դռնապանութեան պաշտօնը տուին: Ծակոդորա՝ որ ան միջոցին ութը տարեկան էր, սաստիկ դառնացաւ՝ մօրն, իրեն ու քերցն եղած նախատանայը վրայ: Եւ երբ յարբունս հասաւ սկսաւ շատ թատրոններու վրայ երեալ, և լարախազներու հետ ընկերացաւ, որոնք միմնախ զգեստ հագուեցին անոր, և որովհէտեւ խիստ ոգելից ու միանգամայն շաղակրատ աղջիկ մըն էր, քիչ մը ատենէն բոլոր Աստանդնուպօլսոյ մէջ համբաւը տարածուեցաւ:

Հեկեպող անունով մէկը Պենտապօլի քաղաքապետ անուանուելով, Ծակոդորա ելաւ ետեւէն գնաց և անոր հարձն եղաւ: Կ' այց քաղաքապետը քիչ ատենէն զինքը քողին վորնտեց, վամն զի իր անտառակութիւններովն բոլոր պաշտօնատարացը գայթակղութեան պատճառ եղեր էր: Կ' արջապանին աղջիկն

անկէ ելաւ Կ' վերսանդրիա գնաց, ուր Ճնիւթեամբ և անառակութեամբ ապրելով, շուտ մը վերջին աստիճանի խեղճութեան մէջ ընկաւ: (Ճը մը, ինչպէս Պլրոկոպիոս իր պատմութեանն ինսէ րորդ գրոցը մէջ կը պատմէ, գձուձ անկողնի մը վրայ պառկած երազ տեսա՝ որ մեծազօր ինքնակալ մը, անոր ոտքին առջեւ կը գնէր պսակ մը և Կ' սիոյ Ճոխութիւններն: Երկրորդ օրը Ճամբայ ելաւ, ու եգիպտական ցորենի նաւով մը Աստանդնուպօլիս մնաւ. ուր առաջին քը զինքը դարձեալ անառակութեանց տուաւ: { Յուստինիանոս, որ նոյն ատենը պարզ սինկղիտոս էր, բայց միանգամյն կայսերութեան ժառանգ որոշուած էր. Ծակոդորայի սաստիկ սիրահարուեցաւ. բայց անիկայ որ գեղեցիկութեանը հետ խորամնկ ալ էր, մէկէն ընթացքը փոխեց. գնաց Կոստանդնուպօլսոյ անծանօթ թաղի մը մէջ ողորմելի տուն մը փակուեցաւ, ու հնա սկսաւ կտաւ մանել, ու քաղաքագիտութեան և գեղեցիկ դպրութեանց ետեւէ ըլլալ: { Յուստինիանոս գնաց բոնի միայնարանէն հանեց զինքը, ու պատրիկուհի տիկնայց պատիւը տուաւ անոր, որով Ծակոդորա քիչ ատենուան մէջ անհուն հարստութիւն զիզեց, և կարդէ գուրս համբաւ հանեց: { Յուստինիանոս կ' ուզէր ինչուան կին առնուլ զայն. բայց Եւփիմիա՝ { Յուստիանոսի կինը, և Կ' իգիլանտիա իր մայրը ամենայն կերպով այս բանիս դէմ զրին: Աստանդիանոս մասնաւոր օրէնքով մը արգիլած էր որ կայսերական մեծ պաշտօնատարք ամենեւին գուսանաց և վատահամբաւ կանանց հետ չամուննան: { Յուստինիանոս ուզեց այս օրէնքը վերցնել ծեր { Յուստիանոսին ձեռքով, որ անշուշտ տկարութեամբ տեղի պիտի տար՝ թէ որ Եւփիմիա զրիւ ձեռքէն չյափշտակէր: Քիչ մը ատենէն մեռաւ Եւփիմիա յանկարձական մահուամբ, որուն համար ըսին թէ Ծակոդորա զինքը թունաւորած ըլլայ: { Յուստիանոս յետս կոչեց Աստանդիանոսի օրէնքը, { Յուստինիանոս ամուս-

նացաւ իմէկողորայի հետ մայիս ամսուն
մէջ, յամին 572. իսկ մայրը Ա իգիլան-
տիա այս բանիս վրայ ամօթէն մեսաւ,
և մէկն ալ չեղաւ որ այս նախատա-
կան ամնունութեանս համար ձայն
հանէ :

Հուստիանոսի մահուընէն վերջը՝
տկարն Հուստինիանոս կայսր ըլլալուն
պէս, կայսրուհի անուանեց իմէկողո-
րան. որ մէկէն ձեռք առաւ հրամայել
զօրաց, ծերակուտին, իշխանաց և ար-
քունի գանձուն: Հուստինիանոս քաղցր
բնաւորութիւն մը ունէր, ամենուն ալ
դիւրամատչելի էր, և ընտանի վարժուն
քով: Իսկ իմէկողորա, ամբարտաւան
ու գուոզ, տէրութեան ամենէն մեծ
պաշտօնատեարց հետ ալ յետին ար-
համարհանօք կը վարուէր: Հուստի-
նիանոս իր օրինաց մէկուն գլուխը կը
ծանուցանէ՝ թէ զայն հրատարակելէն
առաջ՝ Աստուծոյ իրեն տուած Ածարդոյ
ամուսնոյն հետ խորհրդակցեր է:

Իմէկողորա ամենայն կերպով կը ջա-
նար որ իր անցեալ կենացն ամօթը
մուցունել տայ: Իր անառակութեանցն
ատեն գաղղիացի զինուորէ մը որդի ու-
նեցեր էր, որ կայսրուհւոյն բռնութիւն-
ներէն ազատելու համար ելեր ուրիշ
տեղ մը գնացեր էր: Իսկ յամին 530
զինուորը մեռնելու ատեն որդւոյն իմաւ-
ցուց ծննդեան գաղտնիքը: Համեննէս
արաբացին, վասն զի այս էր որդւոյն ա-
նունը, մէկէն ելաւ Աստամնդնուազօլիս
եկաւ: Հազիւ թէ տամնըհինգ տարե-
կան կար, և Ճիշտ մօրը կը նմանէր: Իմէկողորա ամենայն գուէթ և գորով-
ցուց անոր, պատանին ալ գլուխը
խոնարհեցուց և ուրախութեան ար-
տասուք թափեց: այն արտեհ վայր-
կենիս կայսրուհին թիկնապահաց գլու-
զափետին մետաքսէ լար մը նետեց, որ
մէկէն իմացան կայսրուհւոյն գաղտնի
միտքը: Այրկրորդ գիշերը պատանին
խեղդեցին, ու մարմնոյն մեծ քար մը
կապած Ա ոսփոր նետեցին:

Իր շարունակուի:

Պողիկտէտ առ Կրանտոր:

(Տես երես 92)

Թերես անօգուտ է անդրագարձնելս որ հոգիւըտէ
անունը՝ որ 'ի սկզբան հաստատուն նշանակու-
թիւն մ' ունէր, այսօրուան օրս աւելի կամ՝ պա-
կա թուով մի և նոյն աստիճանի քաղաքացինե-
րու գումար մը կը նշանակէ: Հինգ հարիւր տա-
րուցնէ՝ ի վեր որ այս կարգագրութիւնս եղած է,
միշտ հարիւր բննըսունութիւն հարիւրեակ մնա-
ցած է. հիմա հոգում կան ժողովուրդը տասն ան-
դամ աւելի բազմաթիւ ըլլալով քան ինչ որ էր
առաջ, յայտնի բան է որ այս խմբերու անհատա-
կան թիւը շատ աւելի պիտոր ըլլայ:

Այս ալ գիտելու բան է որ ակմբից մէջ, այն
քաղաքացիք որ քուէարկութիւն կ'ընեն, իրենց
այդ իրաւունքը ուղղակի ի դործ չեն դներ. նախ
առանձին իրենց հարիւրեակին մէջ քուէարկու-
թիւն կ'ընեն. մեծ մասին կարծիքը ամենուն հա-
ւանութեամբը կը վճռուի, և անկէ ետքը բոլոր
հարիւրեակը միացած միաքուէիր հաւանութիւնը
կու տայ: Խէց և իցէ որոշման մը մէջ միշտ մեծ բա-
նի տեղ կը դրուի առջի հարիւրեակին քուէն, վասն
զի բոլոր միւնքները անոր կը չետևին. Եթէ առ-
ջի բննըսունը անութիւնը հատը մի և նոյն կարծիքի վրայ
են, վժիուը կ'եւէ ու բանը կը լինայ: Բայց եթէ
ասոր հակառակին ըլլայ, հետզհետէ յաջորդները
կը կանչուին. մինչեւ որ մեծագոյն մասին կարծիքը
հաստատուի: Խիստ քիչ կ'ըլլայ, ինչպէս որ ինձի
զուցուեցաւ, որ մինչև ստորին գասերը կան-
չուին: Հոռոմայեցիք այս աեսակ գործողութեանց
մէջ անանկ յաջողակութիւն մը ստացած են, ո-
րուն առանց անիրաւելու, կրնայ ուրիշ տիտղոս
մը արուել:

Դ. Բար շեղի ականքներուն մէջ ամեն մէկն որ
հոգումէական քաղաքացւոյ իրաւունքն ունի, քուէն
ալ տալու իրաւունք ունի. այս ակմբից մէջ ալ
բազմութեան քուէն տէր է միւնքներուն: Ասոնց
մէջ երկրորդ կարգի ատենակալները կ'ընարուին
ինչպէս Ընապէտնէրէ¹, ժողովրդեան որի բանէ-
ւը, գանձունէրէ² և այն. բոլոր գաւառական դա-
տաւորները, փոխահիւպատունները, փոխապրե-
տորները, գլխաւոր գասուց քրմերը, և նաև մեծ
քրմապետը: Ասոնց մէջ կ'որջուին ժողովրդեան
որինքները, խաղաղութեան պայմանները, քա-
ղաքացւոյ իրաւունքները կը չնորդուին, մէկ քանի
որ էնքներէ ազատ ըլլալու իրաւունքը կը տրուի.
յաղթանակները կը հաստատուին. միով բանիւ ա-
ռանց զանազանութիւն մը ընելու որ և իցէ
քաղաքացի կը կանչուի իր վրայ եղած ամբաստա-
նութեանց պատահանը տալու, ու տէրութեան
դէմ ամբաստանուած յանցանքին համար դա-
տուելու. սակայն իրենց գատապարտութիւնը
կամ աքսորանքի կը նայի և կամ ըստկի:

1. Գղ. Ediles.

2. Գղ. Questeurs.

3. Գղ. Colléges des prêtres.